ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/115

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Բողոքաբեր՝ «Ասատրյանս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցում, մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 03.11.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղարկված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը հրավերի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.11.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.11.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16441-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 03.11.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

04.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.11.2020թ.-ին:

2. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ասատրյանս» ՍՊԸ-ն 03.11.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ասատրյանս» ՍՊԸ-ն և ճանաչվել Ընթացակարգի ընտրված մասնակից:

Այնուհետև հանձնաժողովը որոշում է կայացրել անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ս.թ. հոկտեմբերի 19-ին «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի էլ. հասցեին է ուղարկվել պայմանագրի նախագիծը:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ստացված պայմանագրի նախագծի ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես Ընթացակարգի հրավերի և կնքվելիք պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի միջև:

Վերոհիշյալի հետ կապված Ընկերությունը 21.10.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել գրություն, որտեղ նշվել են արձանագրված

անհամապատասխանությունները (հակասությունները Ընթացակարգի հրավերի և պայմանագրի նախագծի միջև) և գնահատող հանձնաժողովին խնդրել Ընկերությանը ներկայացված պայմանագրի նախագիծը համապատասխանեցնել հրավերով ներկայացված պայմանագրի նախագծին և կրկին ուղղարկել «Ասատրյանս» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-ր և 4-րդ մասերի համաձայն՝

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի 11.3 կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Հրավերի 8.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր....:

Նույն հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 /մեր կարծիքով տեխնիկական վրիպակի պատճառով պետք է նշվեր 8.5/ կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին

աուդիտի) ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Ասատրյանս» ՍՊԸ-ն, որին ս.թ. հոկտեմբերի 15-ին «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՍՊԸ-ի էլ. հասցեին է ուղարկվել պայմանագրի նախագիծը:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ստացված պայմանագրի նախագծի ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես Ընթացակարգի հրավերի և կնքվելիք պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի միջև:

Ի պատասխան վերը նշվածի 21.10.2020թ. «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից գրություն է ներկայացվել գնահատող հանձնաժողովին, հետևյալ բովանդակությամբ.

«25.09.2020 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) մատուցման նպատակով գնումների տեղեկագրում հրապարակվել է N ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով գեաեշմաե հարցման մասին հայտարարություն և հրավեր:

Նշված գնման ընթակարգի արդյունքներով հաղթող է ճանաչվել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ Ընկերություն), որով պայմանավորված 13.10.2020թ.-ին գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել վերջինիս հետ պետական պայմանագիր կնքելու մասին և 15.10.2020թ.-ին Ընկերության գործադիր մարմնին է ներկայացվել պետական պայմանագիր կնքելու մասին առաջարկություն և պայմանագրի նախագիծ:

Ուսումնասիրելով պայմանագրի նախագիծը հայտնում ենք Ձեզ, որ Ընկերության կողմից դիտարկվել և արձանագրվել են անհամապատասխանություններ նախապես գնման հրավերով նախատեսված պայմանների, պահանջների և մեզ ուղղարկված պայմանագրի նախագծի բովանդակության հետ:

Մասնավորապես, հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի 1-ին բաժնով սահմանված պայմանագրի առարկան չի համապատասխանում Ձեր կողմից պայմանագիր կնքելու առաջարկությամբ ուղղարկված պայմանագրի նախագծի նույն բաժնին, որը էական նախապայման է հանդիսացել Ընկերության կողմից հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հրավերով նախատեսված պայմանագրի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամանակահատվածը հստակ սահմանվել է 4-րդ եռամսյակ, որով պայմանավորված N 2

հավելվածով նախատեսվել է, որ ծառայության դիմաց վճարումները իրականացվելու են 2020 թվականի ընթացում: Սակայն մեզ ներկայացված առաջարկությամբ պայմանագրի նախագծի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետի այունակում նշված է որ ծառայության մատուցումն իրականացվելու է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կեքման հիման վրա, իսկ ծառայության մատուցման ժամկետը սահմանվել է հավելված 1.1-ով: Սակայն հրավերով նախատեսված չի եղել N 1.1 հավելված, որը ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին առաջարկությամբ, ինչը փոխում է հայտարարված մրցույթի ողջ էությունը սահմանելով ընկերության համար լրացուցիչ պայմաններ և պարտավորություններ: Հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով նախատեսված է եղել ընդամենը, որ ծառայության տեխնիկական բնութագրի մանրամասները սահմանված է հավելված 1-ով, որը վերաբերվել է միայն մատուցվող ծառայության տեխնիկական բնութագրին, այլ ոչ մատուցման ժամկետին, որը հստակ սահմանվել է նույն հավելվածով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 544-րդ հոդվածի և <<Գնումների մասին>> օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով առաջարկում ենք Ընկերությանը ներկայացված պայմանագրի նախագիծը համապատասխանեցնել հրավերով ներկայացված պայմանագրի նախագծին և կրկին ուղղարկել մեզ:

Կից ներկայացնում ենք պայմանագրի նախագծի մեր տարբերակը, որը համապատասխանում է հրավերի պահանջներին: Խնդրում ենք հաստատել և ուղարկել մեզ:

Գտնում ենք, որ պայմանագրի նախագծում առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն կհանգեցնի ՍՊԸ-ի և ՀՀ էկոնամիկայի նախարայաության միջև հրավերով նախատեսված պահանջներից դուրս, այն է պայմանագրի նախագծով նախատեսված այլ պահանջներով պայմանգրի կնքում»:

Հատկանշական է նաև, որ վերը նշված փաստական հանգամանքի հետ կապված գրություն է ուղարկվել «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնահատող հանձնաժողովին, որը մինչ այս պահը մնացել է անպատասխան, մինչդեռ ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում արձանագրել է հրավերի և պայմանագրի նախագծում առկա անհամապատասխանությունները, արձանագրել այն 21.10.2020թ. գրությունում և ուղարկել գնահատող հանձնաժողովին, հույս ունենալով, որ գնահատող հանձնաժողովը կընդունի իր կողմից թույլ տրված սխալները և առաջնորդվելով ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետով պայմանագրի նախագծում կկատարի փոփոխություններ: Բողոքներ քննող անձի

ուշադրություն ենք Ընթացակարգի հրավիրի և ուղարկված պայմանագրի նախագծի միջև առկա հետևյալ անհամապատասխանությունների վրա.

1. Ընթացակարգի հրավերին կցված է եղել հետևյալ բովանդակության Հավելված 1-ը տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը (կցվում է).

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով պայմանագրի

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհա-նուր քանա-կը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	98111120/514	Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ) բնութագիրը կցվում է (հավելված 1)	դրամ		1	Մ. Մկրտչյան 5	4-րդ եռամսյակ

Մինչդեռ, «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղարկված պայմանագրի նախագծին կցվել է հետևյալ բովանդակության Հավելված 1-ը Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը (կցվում է).

Հավելված N 1
« » 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով պայմանագրի

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միա-վորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհա-նուր քանա-կը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	98111120/514	Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ) բնութագիրը կցվում է (հավելված N 1.1)	դրամ	9600000	1	Մ. Մկրտչյան 5	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ծառայության

							մատուցման ժամկետը սահմանված է հավելված 1.1-ով

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է ծառայությունների մատուցման ժամկետ 4-րդ եռամսյակ, իսկ Ընկերությանը ուղարկված Պայմանագրին կից Հավելված 1-ով կատարվել է Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխություն, մասնավորապես Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է ծառայությունների մատուցման ժամկետ Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ծառայության մատուցման ժամկետը սահմանված է հավելված 1.1-ով:

Բացի նրանից, որ այս մասով ակնհայտ է տարբերություն Հրավերի և ուղարկված Պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետի միջև, նշենք նաև, որ Հրավերով որևէ Հավելվածի 1.1, որով պետք է լրացուցիչ նախատեսվեր ծառայության մատուցման ժամկետ, առկա չէ:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ վճարման ժամանակացույցը (կցվում է).

Հավելված N 2
« » 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հրա-վերով նախատեսված չափա-բաժնի համարը 1	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
1	98111120/514	Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ)	Վճարումն իրկանացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ վճարման ժամանակացույցին համապատասխան											

Մինչդեռ պայմանագրի նախագծին կցվել է հետևյալ վճարման ժամանակացույցը (կցվում է).

Հավելված N 2
« » 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով պայմանագրի

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության															
Հրա-վերով նախատեսված չափա-բաժնի համարը 1	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 202 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
1	98111120/514	Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ)	Վճարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ վճարման ժամանակացույցին համապատասխան												

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ եթե Ընթացակարգի Հրավերի վճարման ժամանակացույցում ուղղակիորեն նշված է, որ ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, ապա ուղարկված պայմանագրի նախագծի Հրավերի վճարման ժամանակացույցում արդեն նախատեսվել է, որ ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, ինչը նշանակում է, որ այդ տարեթիվը փոխվել է, սահմանվում է անորոշ, կարող է նշվել ցանկացած թվի տակ 2021, 2022 և այլն, ինչը հանդիսանում է հրավերի պահանջների խախտում:

3. Ընթացակարգի հրավերին «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջներ» անվանումը կրող առանձին կցված ֆայլում նշված չեն ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ:

Մինչդեռ ուղարկված Պայմանագրի նախագծին կցվել է հետևյալ բովանդակության ցանկ:

ՀՀ	Ներքին աուդիտի ենթակա Միավորներ		Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի ենթակա Միավորներ			Աուդիտի ենթակա ժամանակա-հատված	Աուդիտի արդյունքների հանձնման ժամկետ
	Անվանում	Հասցե	Անվանում	Հասցե	Ռիսկային խումբը		
			մինչ 20.12. 2020թ				
1	ՀՀ էկոնոմիկայի նախարարութուն	Մ. Մկրտչյան 5ա	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազ՝ Լիցենզավորման և թույլտվությունների վարչություն	Մ. Մկրտչյան 5ա		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
2	Զբոսաշրջության կոմիտե	Մ. Մկրտչյան 5ա	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազ՝ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն	Մ. Մկրտչյան 5ա		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
			ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ՝ գործերի կառավարման վարչություն	Մ. Մկրտչյան 5 ա,բ մասնաշենք		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
3	«Ստանդարտների չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	Կոմիտաս 49/2	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ՝ Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչություն	Մ. Մկրտչյան 5բ		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
4	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազ՝ Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչություն	Մ. Մկրտչյան 5բ		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
			ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազ՝ Գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչություն	Մ. Մկրտչյան 5բ		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
5	«Հայաստանի պետական հետքրքրությունների ֆոնդ»ՓԲԸ	Ք. Երևան Հանրապետության 37	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազ՝ Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչություն	Մ. Մկրտչյան 5բ		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
			«Ստանդարտների չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	Կոմիտաս 49/2		2019թ. 01.01.2020-01.12.2020թթ.	մինչև 20.12.2020թ.
			«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ք. Երևան Էրեբունի 12		2019թ 01.01.2020-01.12.2020թթ	մինչև 20.12.2020թ.
			Գյուղական ֆինանսավորման կառույց			2019թ 01.01.2020-01.12.2020թթ	մինչև 20.12.2020թ.

			2021թ				
6	«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ	Արմավիրի մարզ ք. Էջմիածին ԻՍԻ-Լե -Մուրիլո 1	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Մ. Մկրտչյան 5ա		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ 2021թ. 1-4-րդ եռ	իրականացված ադուդիտի արդյունքների հանձնման վերջնաժամկետ է հանդիսանում յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 1 ամիս, բացառությամբ 2019թ-ի արդյունքերը, որի հանձնման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2021թ 1 եռամսյակի ավարտը, իսկ 2020թ-ի արդյունքների հանձնման համար վերջնաժամկետ է սահմանվում 2021թ 1-ին կիսամյակի ավարտը
			Զբոսաշրջության կոմիտե	Մ. Մկրտչյան 5ա		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Ստանդարտների չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	Կոմիտաս 49/2		2021թ. 1-4-րդ եռ	
			«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
7	«Գյումրու Սելեկցիոն կայան» ՓԲԸ	Շիրակի մարզ Ախուրյան համայնք	«Հայաստանի պետական հետքրքրությունների ֆոնդ»ՓԲԸ	Ք. Երևան Հանրապետության 37		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ	Արմավիրի մարզ ք. Էջմիածին ԻՍԻ-Լե -Մուրիլո 1		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Գյումրու Սելեկցիոն կայան» ՓԲԸ	Շիրակի մարզ Ախուրյան համայնք		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
8	«Բանջարաբոստանային և տեխնիկական մածակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ	Արարատի մարզ Դարակերտ համայնք	«Բանջարաբոստանային և տեխնիկական մածակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ	Արարատի մարզ Դարակերտ համայնք		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ Եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ	Մասիսի խճուղի 107/2		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ք. Երևան Էրեբունի 12		2021թ. 1-4-րդ եռ.	
9	«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ	Մասիսի խճուղի 107/2	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	Արմավիրի մարզ Մերձավան Երևանյան խուղի երկրորդ փակուղի 6/1		2019թ. 1-4-րդ եռ. 2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Հավատարմագրման ազգային մարմին»	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք		2019թ. 1-4-րդ եռ.	

			ՊՈԱԿ			2020թ. 1-4-րդ եռ. 2021թ. 1 4-րդ եռ.	
			«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Կոմիտաս 49/3		2019թ 1-4-րդ եռ. 2020թ 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Ներդրումների աջակցման կենտրոն»	Մ. Մկրտչյան 5ա 5 բ		2019թ 1-4-րդ եռ. 2020թ 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ»	Մ.Մկրտչյան 5բ		2019թ 1-4-րդ եռ. 2020թ 1-4-րդ եռ. 2021թ. 1-4-րդ եռ.	
			Գյուղական ֆինանսավորման կառույց			2021թ. 1-4-րդ եռ.	
10	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ք. Երևան Էրեբունի 12	**մինչև 2020թ 4-րդ եռամսյակ**				
			ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Մ.Մկրտչյան 5ա		2022թ. 1-3-րդ եռամսյակ	իրականացված ադուդիտի արդյունքների հանձնման վերջնաձամկետ է հանդիսանում յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 1 ամիս, բացառությամբ 2022թ 3-րդ եռամսյակի աուդիտի արդյունքների, որի հանձնման վերջնաժամկետ է հանդիսանում 20.10.2022թ
			Զբոսաշրջության կոմիտե	Մ.Մկրտչյան 5ա		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
11	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	Արմավիրի մարզ Մերձավան Երևանյան խուղի երկրորդ փակուղի 6/1	«Ստանդարտների չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	Կոմիտաս 49/2		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
12	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք	«Հայաստանի պետական հետքրքրությունների ֆոնդ»ՓԲԸ	Ք. Երևան Հանրապետության 37		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ	Արմավիրի մարզ ք. Էջմիածին ԻՍԻ-ԼԵ -Մուրիլո 1		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
13	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Կոմիտաս 49/3	«Գյումրու Սելեկցիոն կայան» ՓԲԸ	Շիրակի մարզ Ախուրյան համայնք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Բանջարաբոստանային և տեխնիկական մաձակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ	Արարատի մարզ Դարակերտ համայնք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
14	«Ներդրումների աջակցման կենտրոն»	Մ. Մկրտչյան 5ա մասնաշենք	«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ	Մասիսի խճուղի 107/2		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ք. Երևան Էրեբունի 12		2022թ. 1-3-րդ եռամսյակ	

15	«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ»	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	Արմավիրի մարզ Մերձավան Երևանյան խուղի երկրորդ փակուղի 6/1		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
16	Գյուղական ֆինանսավորման կառույց		«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Կոմիտաս 49/3		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Ներդրումների աջակցման կենտրոն»	Մ. Մկրտչյան 5ա մասնաշենք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ»	Մ. Մկրտչյան 5բ մասնաշենք		2022թ. 1-3-րդ եռամսյակ	
			Գյուղական ֆինանսավորման կառույց			2022թ. 1-3-րդ եռամսյակ	

Նշված ցանկը ոչ միայն կցված չի եղել Ընթացակարգի հրավերին, այլ ծառայությունների մատուցման ժամկետից պարզ է դառնում, որ ծառայությունները պետք է մատուցվեն ընդուպ մինչը 2022թ., ինչը հակասում է Ընթացակարգի Հրավերի Տեխնիկական-բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետին 2020թ. 4–րդ եռամսյակին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

16) գնման առարկա՝ գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը.

17) գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված պահանջները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ասատրյանս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղարկված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը հրավերի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Ընկերությունը 19.11.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով վերը նշված դիրքորոշումը «Ասատրյանս» ՍՊԸ-ն հայտնում է հետևյալը.

1. Ի պատասխան Պատվիրատուի այն պնդման, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 21.10.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությանը Պատվիրատուի կողմից ներկայացվել է պատասխան գրություն.

Հայտնում ենք, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից ստանալով կնքվելիք պայմանագրի նախագիծը ուսումնասիրության արդյունքում արձանագրել է անհամապատասխանություններ ուղարկված պայմանագրի նախագծի և Ընթացակարգի հրավերի միջև, որի վերաբերյալ 21.10.2020թ. գրություն է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որում մանրակրկիտ ներկայացնելով առկա անհամապատասխա-նությունները Պատվիրատուին խնդրել է Ընկերությանը ներկայացված պայմանագրի նախագիծը համապատասխանեցնել հրավերով ներկայացված պայմանագրի նախագծին և կրկին ուղղարկել ՍՊԸ-ին:

Մինչդեռ Պատվիրատուի այն պնդումը, որ Պատվիրատուի կողմից ներկայացվել է պատասխան գրություն ՍՊԸ-ին հայտնում ենք, որ այդ գրությունը ներկայացվել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին միայն բողոքը ներկայացնելու օրը /բողոքը ներկայացնելուց հետո/:

2. Ի պատասխան Պատվիրատուի կողմից ներկայացված պատասխան գրության.

2.1 Ուսումնասիրելով գրությունը հստակ է դառնում, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը անդրադարձ է կատարել միայն վճարման ժամանակացույցին, մինչդեռ առկա էին այնպիսի անհամապատախանություններ, որոնց ընդհանրապես անդրադարձ չի կատարվել, մասնավորապես՝

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսվել է ծառայությունների մատուցման ժամկետ 4-րդ եռամսյակ, իսկ Ընկերությանը ուղարկված Պայմանագրին կից Հավելված 1-ով կատարվել է Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխություն, մասնավորապես Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով

նախատեսվել է ծառայությունների մատուցման ժամկետ Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ծառայության մատուցման ժամկետը սահմանված է հավելված 1.1-ով:

Բացի նրանից, որ այս մասով ակնհայտ է տարբերություն Հրավերի և ուղարկված Պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետի միջև, նշենք նաև, որ Հրավերով որևէ Հավելվածի 1.1, որով պետք է լրացուցիչ նախատեսվեր ծառայության մատուցման ժամկետ, առկա չէ:

2.2 Ընթացակարգի հրավերին «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջներ» անվանումը կրող առանձին կցված ֆայլում նշված չեն ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ:

Նշված ցանկը ոչ միայն կցված չի եղել Ընթացակարգի հրավերին, այլ ծառայությունների մատուցման ժամկետից պարզ է դառնում, որ ծառայությունները պետք է մատուցվեն ընդուպ մինչը 2022թ., ինչը հակասում է Ընթացակարգի Հրավերի Տեխնիկական-բնութագիր-գնման ժամականացույցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետին 2020թ. 4–րդ եռամսյակին:

Միևնույն ժամանակ կից ներկայացնում ենք նման մրցույթների հրավերներ (ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-20/03; ՀՌՀ-ԳՀԾՁԲ-20/19, ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՏ-20/1), որոնք ապացուցում են բողոքում ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը (հրավերով հստակ նշվում են աուդիտի ենթակա միավորների ցանկը):»:

3. <u>ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.11.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/16556-2020 գրությամբ դիմել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝ հնարավորություն տալով «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 03.11.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 07.11.2020թ.-ի թիվ 09.27.45/15155-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ներկայացնում ենք 03.11.2020թ. «Ասպրյանս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման ընթացակարգի բողոքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) դիրքորոշումը:

Հարկ ենք համարում նշել, որ Բողոքի 3-րդ պարբերության մեջ հիշատակել է, որ անգործության ժամկետ է սահմանվել, որից հետո ընտրված մասնակցին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցը՝ «Ասպրյանս» ՍՊԸ-ն, նշված ընթացակարգի միակ հայտ ներկայացնողն է եղել և տվյալ դեպքում անգործության ժամկետը կիրառելի չէ, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, իսկ համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, պայմանագիր կնքելու որոշումը բողոքարկվում է անգործության ժամանակահատվածում:

Միաժամանակ, Ձեր ուշադրությունը ցանկանում ենք հրավիրել այն հանգամանքին, որ Բողոքարկողը՝ «Ասպրյանս» ՍՊԸ-ն, իր բողոքում որևիցե կերպ չի ակնարկել, թե Օրենքի որ հոդվածի շրջանակներում է իրականացվել գնանշման հարցման ընթացակարգը:

Հայտնում ենք, որ ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է, հիմք ընդունելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը Օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Վերոհիշյալ դրույթի վրա հղումը ամրագրված է ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) առաջին էջում, վճարման ժամանակացույցում, ինչպես նաև Հրավերի հավելված 6-ի 7.15 կետում:

Տեղեկացնում ենք նաև, որ ի պատասխան «Ասպրյաս» ՍՊԸ-ի կողմից 21.10.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությանը (Արձանագրություն-առաջարկություն) ներկայացվել է պատասխան գրություն:

Սույն գրությամբ, ինչպես նաև Մասնակցին ուղղված գրությամբ, Պատվիրատուն ներկայացնում է իր դիրքորոշումը և պնդում, որ Հրավերով ամրագրված և պայմանագիր կնքելու առաջարկի մեջ ընդգրկված պայմանագրի նախագծի պայմանների միջև անհամապատասխանություն առկա չէ:

Հրավերով սահմանված պայմանագրի տեխնիկական բնութագրի և հոկտեմբերի 19-ին Պատվիրատուի կողմից Բողոքարկողին ուղարկված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրի բովանդակության մեջ անհամապատասխանություն լինել չի կարող, քանի որ Հրավերի պայմանագրի նախագծի անբաժանելի մաս համարվող տեխնիկական բնութագրի 2-րդ գլխով ամրագրված էր, որ ներքին աուդիտի ենթակա միջավայրը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, որի կառուցվածքը սահմանված է ՀՀ Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ, իսկ Պատվիրատուի կողմից ստորագրման ներկայացված պայմանագրի նախագծում, պարզապես, մանրամասնվել է հիշյալ տեղեկատվությունը: Բողոքարկողի կողմից նշված անհամապատասխանությունը, թերևս, վերաբերում է Պայմանագրի հավելված 1.1-ի մեջ Պատվիրատուի ենթակայության տակ գտնվող և այլ իրավաբանական հասցեներով ամրագրված կառույցների (միավորների) առկայությանը, որոնց հետ կապված ծառայությունները կարելի է վերանայել:

Ինչ վերաբերում է Բողոքարկողի կողմից մատնանշվածին, որ Հրավերի համապատասխան հավելված 1-ով ծառայության մատուցման ժամանակահատվածը սահմանվել է 4-րդ եռամսյակ, իսկ վճարումը 2020թ. և վճարման ժամանակացույցում նշված է, որ Վճարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ վճարման ժամանակացույցին համապատասխան, ակնհայտ է, որ Պատվիրատի կողմից գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է՝ հիմք ընդունելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:

Ամփոփելով վերոհիշյալը՝ պնդում ենք, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով պայմանով գնում իրականացնելու դեպքում, ծառայության մատակարարման ժամկետի այլ ընկալում, քան այն ժամկետը, որը սահմանված է Հրավերում առկա տեխնիկական բնութագրի 6-րդ գլխի առաջին պարբերությամբ՝ առնվազն 24 ամիս, բացառվում է:

Այնուամենայնիվ, նման թյուրըմբռնման առաջացման դեպքում Բողոքարկողը կարող էր, հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, պաշտոնապես

բողոքարկել Հրավերը և հայտնել իր անհամաձայնությունը առկա պայմանների վերաբերյալ, որը, սակայն, չի արվել:

Կից ներկայացնում ենք ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման ընթացակարգի բողոքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով 25.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 02.10.2020թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) Հավելված 6-ով՝ պետության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) մատուցման պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ կերպ՝ «Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ) բնութագիրը կցվում է (հավելված 1)»:

v. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) բնութագրով՝ Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանվել է ներքին աուդիտի ենթակա միջավայրը, համաձայն որի՝ Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, ընդգրկում կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու

աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները՝ (Գործառույթը կամ գործընթացը կազմակերպության նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է):

Աուդիտի միջավայրի տարրերը, որոնք կոչվում են միավորներ (այսուհետ՝ Միավորներ), ներառում են.

1) մասնաճյուղերը,

2) համակարգի կազմակերպությունները՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ), համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ), 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները,

3) հիմնարկները,

4) հիմնական և աջակցող ստորաբաժանումները (վարչությունները, բաժինները),

5) այլ ստորաբաժանումները, գործընթացները, ծրագրերը:

vi. Հավելված 1-ի 6-րդ կետով սահմանվել է ծառայության ընդունման և վճարման ժամանակացույցը, համաձայն որի՝ կնքվելիք պայմանագրով ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է առնվազն 24 ամիս, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

vii. Նույն Հավելված 1-ի 9-րդ կետով սահմանվել է պատվիրատուի կողմից լրացման ենթակա աղյուսակ, հետևյալ կերպ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ				
Ներքին աուդիտի ենթակա Միավորներ		Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի ենթակա Միավորներ		
Անվանում	Հասցե	Անվանում	Հասցե	Ռիսկային խումբը

viii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

ix. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.10.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված/հաղթող մասնակից:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որոշել է հաղթող մասնակցի հետ կնքել պայմանագիր, ինչպես նաև հիմք ընդունելով նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, որոշել է անգործության ժամկետ չսահմանել:

xi. Հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում 13.10.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 03.11.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտակա-նությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնման առարկայի բնութագրի հաստատումն է: Հրավերով նախատեսվում է նաև, որ այն պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանն ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով 25.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 02.10.2020թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան: Նույն Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ով՝ պետության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) մատուցման պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության տեխնիկական բնութագիրը սահմանվել է «Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ) բնութագիրը և կցվել է հավելված 1-ը»:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) բնութագրով՝ Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանվել է ներքին աուդիտի ենթակա

միջավայրը, համաձայն որի՝ Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, ընդգրկում կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները և այլն, 6-րդ կետով սահմանվել է ծառայության ընդունման և վճարման ժամանակացույցը, համաձայն որի՝ կնքվելիք պայմանագրով ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է առնվազն 24 ամիս, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

Հանձնաժողովի 07.10.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից և 13.10.2020թ.-ին Հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, թույլ է տալիս եզրակացնել, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, վերջինիս վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջները ներկայացվել են Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Ընկերությունը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի

ներկայացման վերջնաժամկետը, որպիսի պայմաններում «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 03.11.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**